ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

ԹԵՄԱ՝ «Խոսք և հաղորդակցման դասերը տարրական դասարաններում»

ԿԱԶՄԵՑ՝ Արևիկ Ղազարյան Լյովայի

(անուն, ազգանուն, հայրանուն)

Թիվ 3 հտ/կրթ ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

ՂԵԿԱՎԱՐ՝ Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

ԿԱՊԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....4

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....7

ԳԼՈՒԽ 2

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....9

ԳԼՈՒԽ 3

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկանց հետ հաղորդակցվելու ունակությունը նույնպես ապրանք է, ինչպիսիք են շաքարն ու սուրճը: Ես պատրաստ եմ այդ ունակության համար վճարել ավելին , քան այս աշխարհի որևէ այլ ապրանքի համար:

Ջ. Ռոկֆելլեր

Լեզուն-խոսքը հասարակական-պատմական արդյունք են: Նրանցում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ամենալայն իմաստով:

Լեզուն և խոսքը ծագել են ու զարգացել մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները:

«Խոսքի զարգացումը նրա մշակումը, կատարելագործումը և հարստացումն է այն հաշվով , որ ապահովվի խոսքի ճիշտ , նպատակային ու գեղեցիկ կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի և թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, բոլոր օրինաչափությունների տեսակետից»[1] :

Հանրահայտ է՝ երեխաների խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացումն իրականացվում է գործունեության մեջ, իսկ այդ գործունեության շարժիչ ուժը հաղորդակցման պահանջն է՝ կարիքը: Շրջապատողների մեջ հաղորդակցման պահանջը և սոցիալական միջավայրը երեխայի խոսքի զարգացման կարևորագույն գործոններն են: Այդ գործընթացում երեխան պասիվորեն չի ընկալում մեծերի խոսքային կաղապարները, այլ ակտիվորեն յուրացնում է խոսքը՝ որպես համամարդկային փորձի մի մաս: Ասվածից ենթադրում ենք, որ մարդու մտածողության զարգացման մակարդակի, զգացմունքների խորության կարևորագույն ցուցանիշներից մեկը նրա խոսքն է:

Մեր հետազոտության նպատակն է՝ բացահայտել տարրական դասարաններում խոսքի և հաղորդակցման էությունը, դրանց զարգացման ուղիները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2. բացահայտել խոսքի զարգացման լավագույն մեթոդները,

3. բացահայտել, այն առարկան կամ առարկաները, որոնց ընթացքում լավագույնս հնարավոր է զարգացնել սովորողների խոսքը և ապահովել նրանց ակտիվ հաղորդակցումը:

[1] Աբրահամյան Ս. Գ. , Աշակերտի խոսքի զարգացումը, Ե., Լույս, 1973, էջ 75,

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ինչպես ցույց է տվել մասնագիտական գրականության վերլուծությունը՝ հաղորդակցումը ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝

- շրջապատի հետ կապի մեջ մտնելու ցանկություն՝ կարիքը, և շփման կանոնների իմացությունը («ես ուզում եմ»),

- շրջապատի հետ հաղորդակցվելու կանոնների իմացությունը («ես գիտեմ»),

- հաղորդակցումը կազմակերպելու ունակությունը («ես կարող եմ»): Վերոնշյալ բաղադրիչների ձևավորման համար էլ ուսուցչի առջև դրված են երեխաներին հաղորդակցվել սովորեցնելու, միմյանց հետ համագործակցելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ շփման ունակությունները և կարողությունները զարգացնելու խնդիրներ: Ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորմանն անդրադարձել են դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում: Կան բազմաթիվ աշխատություններ, որոնք նվիրված են ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորմանը և զարգացմանը: Ն. Գ. Չերնիշևսկին սահմանել է, որ ուսուցչի խոսքը դաստիարակության կարևոր միջոցներից մեկն է: Նրա կարծիքով ուսուցչի խոսքը երեխաների համար պետք է լինի պարզ և հասկանալի, բայց ոչ պարզեցված[1] : Հայ մանկավարժությունը ևս անմասն չի մնացել ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորման հիմնախնդրի ուսումնասիրման գործում: Մեր ուսումնասիրած բազմաթիվ հոդվածներում, ձեռնարկներում մատնանշված են այդ խնդրի լուծման արդյունավետ ուղիներ, միջոցներ և հնարներ: Այսպես, հայ մեծանուն մանկավարժ Մ. Մամուրյանը կարևորել է ուսուցչի լեզուն և ոճը: Նա պնդում է, որ խոսքի հստակությունն ու որոշակիությունն արտացոլում են ուսուցչի առարկայական մասնագիտական պատրաստության և ուսուցանելու արվեստի հմտությունը, իսկ անորոշ, աղքատիկ խոսքը, արտահայտություններն ընդհակառակը՝ նրա գիտելիքների խառնաշփոթությունը: Կարևոր հանգամանք է նաև լեզվի քերականական կանոնների պահպանման ճշտությունը, առոգանությունը, որովհետև աշակերտների լեզվի մշակման, ընդօրինակման ամենօրյա և գլխավոր աղբյուրը ուսուցիչներն են իրենց լեզվական արտահայտություններով: Մամուրյանը նշում էր, որ ուսուցիչը պետք է ունենա հարուստ բառապաշար և տեղին ու նպատակային գործածի հարմար բառերը, որոնք արտահայտչական որևէ դժվարություն չկրեն: Իսկ խոսքի մշակման, բառապաշարի հարստացման աղբյուրը գրական հեղինակների աշխատություններն են, դրանց ընթերցումը: Բայց

---

[1]Чернышевский Н. Г., Избранные педагогические сочинения./ Под редакций А. Ф.

[2]Составитель А. В. Плеханов, М., Педагогика, 1983, 336 с.

բառապաշարի հարստությունը չպետք է ծանրաբեռնի ուսուցչի խոսքն անտեղի, չափից ավելի «հորդառատ» բառերով, այլապես բառերի տարափի տակ կմթագնի ասելիքը: «Երբ մտածողությունը ճշտգրտության կողմե թերի է, մարդ պետք եղածն ավելի խոսելու կստիպի»,– նկատում է Մամուրյանը[1]: Մամուրյանի տեսակետն այսօր էլ արդիական է, և այդ ուղղությամբ նպատակաուղղված աշխատանք է իրականացվում: Վ. Ա. Սուխոմլինսկին կարևորում էր բառի արժեքը և հաղորդակցման ժամանակ մեծ կարևորություն էր տալիս: Նա մասնավորապես մատնանշել է «բառի» դաստիարակչական անսահման ուժը. որի միջոցով ուսուցիչները վարպետորեն են մոտենում երեխաների սրտին[2] : Կարելի է հավելել, որ նրանք ամենանուրբ էակներն են, և կարող է նրանց հոգեբանական լուրջ վնաս հասցնել անգամ ոչ տեղին արտահայտված խոսքը, հետևաբար յուրաքանչյուր բառ արտասանելիս պիտի մտածված գործածել: Քանի որ գրագետ խոսքի բաղադրիչների մեջ կարևոր է լեզվի քերականական կանոնների իմացությունը, ապա այն մանկավարժին տալիս է մտքերը ճիշտ արտահայտելու հնարավորություն, խոսքը դարձնում է իմաստավորված՝ նպաստելով սովորողների կողմից ուսումնական նյութի ամբողջական ընկալմանը, ըմբռնմանն ու մտապահմանը[3]:Կարևորելով նշվածը՝ խոսքը չպետք է լինի խրթին, երեխաների համար անհասկանալի, անմեկնելի: Բացի այդ՝ կարևոր է խոսքի արտահայտչականությունը՝ բովանդակությունը, վստահությունը, համոզիչ լինելը, պատկերայնությունը, առոգանությունը, սահունությունը և այլն: Ուստի ուսուցիչը պետք է տիրապետի.

- գրական, գեղարվեստական, ընկերական շփմանը,
- հետաքրքիր, ընկերական, սիրով շփմանը,
- ստեղծագործական, երևակայական շփմանը,
- ստեղծագործական մտածողությանը,
- կազմակերպչական կարողությանը,
- հումորի զգացում ունենա,
- լինի վճռական, հետևի կարգապահությանը և այլն[4]:

---

[1] Շավարշյան Ա. Մ., գիրք Բ, հայպետուսմանկիրատ, Եր., 1961թ., 725 էջ:

[2]Сухомлинский В. А. Сердце отдаю детям. Киев: Изд – во «Радяньска школа», 1987, 293 с.

[3]Фалей М. В., Педагогическое общение : учебное пособие / М. В. Фалей. – Южно–Сахалинск : изд–во СахГУ, 2014, 116 с.

[4]Лельчицкий И.Д. Идеал учителя как научное понятие //Педагогика. – 2005. – №1, март, С. 79–85

Այսպիսով, արդյունավետ կազմակերպված մանկավարժական հաղորդակցման գործընթացը հնարավորություն է տալիս մանկավարժական գործունեության ժամանակ ապահովելու իրական հոգեբանական շփում, որը պետք է առաջանա մանկավարժի և երեխաների միջև՝ նրանց վերածելով հաղորդակցման սուբյեկտների, օգնելով հաղթահարել տարաբնույթ հոգեբանական խոչընդոտները, որոնք առաջանում են փոխգործունեության գործընթացում, երեխաներին ուղղորդել համագործակցության՝ դարձնելով մանկավարժական ստեղծագործության սուբյեկտների: Այս դեպքում մանկավարժական հաղորդակցումը բնութագրում է մանկավարժական գործունեության ընդհանուր սոցիալ–մանկավարժական կառուցվածքը: Այն մանկավարժական գործունեություն է ներմուծվում որպես ներազդման գործիք և սովորական պայմաններն ու հաղորդակցման գործառույթներն այստեղ ստանում են հավելյալ ծանրաբեռնվածություն, քանի որ համամարդկային ասպեկտներից վերափոխվում են մասնագիտական– ստեղծագործական բաղադրիչի:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մանկավարժական գործունեությունը բարդ և բազմաբաղադրիչ է, որի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի վարպետությամբ, մասնագիտական որակներով և հաղորդակցական կարողությունների տիրապետման մակարդակով: Ն. Վ. Կուզմինան նշված բաղադրիչներից մասնավորապես կարևորում է երեքը՝ կառուցվածքայինը, մեթոդականը և սոցիալ– հոգեբանականը: Ընդ որում՝ վերջիններս բնութագրում են մանկավարժական գործընթացի ներքին կառուցվածքը: Դրանց միասնությունն ու փոխկապակցվածությունը հնարավորություն են տալիս ամբողջական ձևով իրականացնել մանկավարժական համակարգի ծրագրավորված խնդիրները: Այդ միասնության մեջ հիմնախնդրի լուծման իմաստով գլխավորը սոցիալ–մանկավարժական բաղադրիչն է՝ մանկավարժական հաղորդակցումը, որն ապահովում է մյուս երկու բաղադրիչների իրականացումը: Մանկավարժական գործունեությունը անթիվ ստանդարտ և ոչ ստանդարտ մանկավարժական խնդիրների լուծման գործընթաց է: Մանկավարժական խնդիրների առարկան կարող են լինել աշակերտների գիտելիքները, նրանց անհատական–գործնական որակները, հարաբերությունները և այլ այնպիսի բնորոշումները, որոնք հակված են որակական և քանակական փոփոխությունների: Օրինակ՝ մանկավարժական խնդրի առաջացման ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում բացատրել նոր նյութ, մանկավարժը վերլուծում է իրավիճակը, փնտրում է բացատրելու հնարավոր տարբերակներ, ընտրում է արդյունավետ մեթոդներ, այնուհետև իրականացնում է մանկավարժական գործողություններ:

Մանկավարժական խնդիրների լուծման բոլոր փուլերում մանկավարժը կիրառում է հաղորդակցման որոշակի համակարգ, որի միջոցով էլ կազմակերպում է մանկավարժական փոխգործունեությունը: Ուստի մանկավարժական խնդիրների տարրերից է համարվում հաղորդակցական խնդիրը (շփման խնդիրը): Վերոնշյալը հաշվի առնելով՝ մանկավարժական գործունեությունը կարող է ներկայացված լինել նաև որպես հաղորդակցական խնդիրների շարք, որոնք փոխում են, զարգացնում և կազմակերպում մանկավարժական փոխգործունեությունը՝ համապատասխան տվյալ խնդիրների: Շատ մանկավարժներ հաղորդակցման խնդիրները չեն դիտարկում որպես մանկավարժական գործընթացի բաղկացուցիչ մաս, սակայն գործնական իրավիճակներում անգիտակցաբար լուծում են դրանք: Ուստի և հաղորդակցական խնդիրները հանդիսանում են մանկավարժական փոխգործունեության բաղկացուցիչ մասը և հաղորդակցման գործընթացում է ձևավորվում համագործակցության այն կարևոր համակարգը, որի միջոցով ապահովվում է կրթության արդյունավետությունը, հաղորդակցումը ձեռք է բերում գործառութային բնույթ և ունենում է մասնագիտական նշանակություն: Անառարկելի է, որ օրվա մեծ մասը

կրտսեր դպրոցականներն անցկացնում են ընկերների, ուսուցիչների և այլ շրջապատող մարդկանց հետ շփվելով: Շփման բովանդակությունը, բնականաբար, աստիճանաբար փոխվում է. նրա մեջ նվազում են խաղերի հետ կապված թեմաները, գերակշռում է գործնական շփումը: Առաջին դասարանում սովորողներն սկսում են ավելի շատ շփվել իրենց ուսուցիչների հետ: Այս հաղորդակցության նկատմամբ նրանք սկսում են ավելի շատ հետաքրքրություն ցուցաբերել, քան թե տարեկիցների, և քանի որ ուսուցիչը նրանց համար հեղինակություն է, աշակերտներն անվերապահորեն ընդունում և ընդօրինակում են ուսուցչի յուրաքանչյուր բառը, արտահայտությունը, միտքը: Մեծահասակները, ուսուցիչը և նույնիսկ կողմնակի մարդիկ երեխայի հետ հաղորդակցվում են ինչպես առանձնահատուկ անձի հետ, ով տարեկիցների նման իր վրա է վերցրել ուսումնական գործունեություն: Ուսուցչի ղեկավարությամբ երեխաները ձեռք են բերում հատուկ մտածական գործընթացներ իրականացնելու ունակություն՝ յուրացնելով մարդկային ձեռքբերումների հիմնական ձևերը (գիտություն, արվեստ, բարոյականություն և այլն)՝ սովորելով գործել ըստ ավանդույթների Պատահական չէ, որ դաստիարակության արվեստն իր մեջ ներառում է խոսելու մշակույթ: Ուստի դաստիարակչական աշխատանքի մեթոդների մեջ էականը խոսքայինն է, որի միջոցով արտահայտվում են զգացմունքներն ու հույզերը, քանի որ բազմաթիվ կոնֆլիկտների աղբյուրներ պայմանավորված են հաղորդակցվողների խոսքի անկատարությամբ: Կասկածից վեր է, որ ուսուցչի մասնագիտության մեջ խոսքը նրա «զենքն է», առանց որի անհնար է պատկերացնել ուսումնական գործընթացը: Իսկ դա նշանակում է, որ ուսուցիչը պետք է «ցուցադրի» ճշգրիտ, հստակ, արտահայտիչ խոսք (այլ ոչ թե ուղղակի խոսի), կատարելապես տիրապետի խոսքի մշակույթին:

ԳԼՈՒԽ 2

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Մեթոդները ստեղծվում են այս կամ այն տեսության շրջանակներում և կոչված են ծառայելու վերջինիս: Յուրաքանչյուր տեսություն ստեղծում է իր մեթոդները և նրանց օգնությամբ լուծում տարազան հետազոտական կամ պրակտիկ խնդիրներ: Ուրեմն, **մեթոդները գործիքներ են, որոնց օգնությամբ տեսությունն իրականացնում է իր իմացական կամ գործնական նպատակները: Այլ խոսքով, մեթոդը տեսության գործունակության, նրա ակտիվության դրսևորման միջոց է:** Առանց մեթոդի տեսություն չկա, կարելի է ասել, որ մեթոդը միշտ թաքնված ձևով առկա է տեսության մեջ. դա գործունեության այն եղանակն է, որը ածանցվում կամ արտածվում է տեսության հիմնարար սկզբունքներից ու օրենքներից:

Կարևոր է ընդգծել նաև մեթոդի ու տեսության տարբերիչ առանձնահատկությունները: Տեսությունները երկու հիմնարար գործառույթ ունեն. **բացատրել առկա փաստերը և կանխատեսել նոր փաստեր:** Մեթոդը նման գործառույթներ չունի, այն ընդամենը տեսության կամ պրակտիկ գործունեության կարգավորիչ է, իրականության ճանաչման կամ նրա վերափոխման ռազմավարություն:

Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող, հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՝ ուսուցման նպատակների իրականացմանը:

Ուսուցման մեթոդն իր գործառության մեջ ենթադրում է որոշակի ուսումնական նպատակի և վերջինս իրականացնելու համար անհրաժեշտ գործողությունների ու համապատասխան միջոցների առկայություն : Այլ խոսքով

Ուսուցման մեթոդը, ուսուցման նպատակների իրականացմանն ուղղված մանկավարժի և սովորողների փոխկապակցված ու փոխպայմանավորված գործունեության եղանակ է կամ այլ կերպ՝ ուսումնական խնդիրների լուծմանը միտված, սովորողների իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող մանկավարժի նպատակաուղղված գործողությունների համակարգ:

Մանկավարժները միահամուռ այն կարծիքին են, որ մեթոդն է ուսուցման նպատակներն իրականացնողը և «ինչպե՞ս սովորեցնել հարցին միայն վերջինս է պատասխանում: Ենթադրվում է, որ ուսուցման կազմակերպական ձևը երկրորդական նշանակության կառուցվածք է և կրթության որակի ապահովման խնդրում նկատելի դեր չունի: Ուսուցման մեթոդը մատնանշում է ուսուցման ներքին, պրոցեսուալ կողմը և հանդես է գալիս մի կողմից որպես ուսուցչի ուսուցանող աշխատանքի, մյուս կողմից՝ ուսումնական նյութի յուրացմանն ուղղված սովորողների ուսումնական (իմացական) գործունեության եղանակ: Ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևի հասկացությունը այլ իմաստ ունի: Լատինական forma բառը նշանակում է արտաքին տեսք, արտաքին ուրվագիծ: Հետևաբար, ուսուցման ձևը որպես դիդակտիկական կատեգորիա, մատնանշում է ուսումնական աշխատանքի կազմակերպման արտաքին կողմը, որը կապված է սովորողների քանակի, ուսուցման ժամանակի ու տեղի, ինչպես նաև նրա իրականացման կարգի հետ :

Եվ այսպես, դասը և ուսուցման կազմակերպական բոլոր ձևերը ուսուցման ամբողջական գործընթացում երկրորդական նշանակություն ունեն, վերաբերում են ուսուցման արտաքին կողմին, չեն առնչվում նրա ներքին էությանը: Այս համարյա համընդհանուր ճանաչում գտած տեսակետը հիմնված է մի մոտեցման վրա, ըստ որի՝ ուսուցումն իր էությամբ իմացական գործունեություն է: **Մեթոդն է, որ կազմակերպում, կարգավորում է այդ գործունեությունը: Նրա կիրառումը ուղղակի, կոշտ կախում չունի աշակերտների թվից, դասագրքերի առկայությունից կամ նրանց որակից, ուսումնական միջավայրի առանձնահատկություններից՝ այն ամենից, ինչից ուղղակիորեն կախյալ է ուսուցման կազմակերպական ձևը: Մեթոդը հաշվի է առնում մարդու հոգեկան կառուցվածքը, հոգեկանում ընթացող իմացական պրոցեսների առանձնահատկությունները, ճանաչողության հոգեբանական մեխանիզմները: Մեթոդն ստեղծվում է այս ամենի գիտական իմացության հենքի վրա:** Ուսուցման կազմակերպական ձևը, ենթադրվում է, որ այս ամենի հետ առնչություն չունի, կամ առնվազն, որոշիչ չէ այդ առնչությունը: Այն հիմնականում կոնկրետ իրադրական խնդիրներ լուծելու գործառույթ ունի. ինչպես միավորել սովորողներին մեկ ընդհանուր ուսումնական գործընթացի մեջ, ինչպես կազմակերպել նրանց և ուսուցչի միջև փոխհարաբերությունները, տվյալ պայմաններում ուսուցման այս կամ այն մեթոդը լավագույնս իրականացնելու համար և այլն:

Մեթոդների դասակարգումը

Ուսուցման մեթոդների դասակարգումը հիմնականում մեկ նպատակ է հետապնդում. օգնել ուսուցչին կատարել մեթոդների օպտիմալ ընտրություն և դրանով իսկ լավագույնս իրականացնել ուսուցման նպատակները: Նշենք, որ խոսքը ոչ թե նեղ առարկայական, այլ ընդհանուր դիդակտիկական մեթոդների մասին է՝ մեթոդների, որոնք համեմատաբար լայն կիրառական ոլորտ ունեն և կարող են օգտագործվել տարբեր առարկաներ ուսուցանելիս (դասախոսություն, զրույց, իլլյուստրացիա, ցուցադրում, գրքի հետ աշխատանք և այլն):

Ուսուցման մեթոդների դասակարգման բազմաթիվ փորձեր են արվել: Մեթոդները դասակարգվել են

- **ըստ դասարանում ուսուցչի և աշակերտի դրսևորած ակտիվության՝**
  ինֆորմացիայի շարադրանք,
  զրույց,
  ինքնուրույն աշխատանք
- **ըստ ուսուցման այս կամ այն փուլում իրականացվող դիդակտիկական խնդիրների՝**
  գիտելիքների ձեռքբերման մեթոդներ,
  կարողությունների ու հմտությունների ձևավորման մեթոդներ,
  ստեղծագործական կարողությունների ձևավորման մեթոդներ,
  անցած նյութի ամրապնդման մեթոդներ,
  գիտելիքների ու կարողությունների ստուգման մեթոդներ,
- **ըստ գիտելիքների ձեռքբերման աղբյուրների՝**
  խոսքային մեթոդներ,
  զննական մեթոդներ,
  պրակտիկ մեթոդներ
- **ըստ կրթության բովանդակային բաղադրիչների յուրացման եղանակների՝**

ինֆորմացիոն-ռեցեպտիվ մեթոդներ,
վերարտադրման մեթոդներ,
պրոբլեմային շարադրանք,
մասնավոր-որոնողական մեթոդներ,
հետազոտական մեթոդներ:

Թեև ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն կան մի շարք գործոններ, որոնք պայմանավորում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այս կամ այն մեթոդի ընտրությունը: Մեթոդը կարող է ընտրվել կախված

- տվյալ թեմայի ուսուցման նպատակից,
- բովանդակությունից,
- ուսումնական նյութի ծավալից, բովանդակության բնույթից և բարդության աստիճանից,
- սովորողների պատրաստվածության մակարդակից,
- սովորողների տարիքային առանձնահատկություններից ու ուսումնական հնարավորություններից,
- ուսուցման համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններից,
- ուսուցիչ- աշակերտ հարաբերությունների բնույթից,
- սովորողների թվաքանակից և այլն:

Դպրոցական պրակտիկայում առավել հաճախ կիրառվում են <u>խոսքային, զննական և գործնական</u> մեթոդները :

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ

1. Զրույց
2. Դպրոցական դասախոսություն
3. Պատմություն
4. Բացատրում,
5. Աշխատանք դասագրքով

Խոսքային մեթոդների օգնությամբ լուծվում են սովորողներին համակարգված գիտելիքներ հաղորդելու, նրանց մոտ խոսքի կուլտուրայի ձևավորման խնդիրները: Նրա արդյունավետության կարևոր պայմաններ են խոսքի մատչելիությունը, արտահայտչականությունը, հստակ տրամաբանական կառուցվածքը, պատկերավորությունն ու ապացուցականությունը:

Զրույց

Զրույցի նպատակը սովորողին այս կամ այն հարցի շուրջը խորհրդածելուն մղելն է: Ուսուցիչը հատուկ կազմակերպված հարցերի միջոցով դրդում է աշակերտին դատողություններ ու վերլուծություններ կատարել փաստերի և երևույթների մասին, որի արդյունքում ինքնուրույն հասնում է համապատասխան տեսական եզրակացությունների ու ընդհանրացումների:

Դպրոցական դասախոսություն

Սա ուսուցման մի մեթոդ է, որի դեպքում ուսուցիչը բավական երկար ժամանակ բանավոր շարադրում է նկատելի ծավալով ուսումնական նյութ, օգտագործելով սովորողների իմացական գործունեության ակտիվացման որոշակի հնարներ :

Այս մեթոդի գլխավոր գործառույթը համակարգված և խոր տեսական գիտելիքներ հաղորդելն է: Այն կիրառելի է հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում :

Պատմություն

Պատմելը նկարագրական բնույթի ուսումնական նյութի վառ կենդանի ներկայացումն է:

Սովորաբար այս դեպքում ուսուցիչը փորձում է չդրսևորել իր վերաբերմունքը երևույթների նկատմամբ, աշակերտին մտածելու և ինքնուրույն եզրակացություններ անելու ազատություն տալով:

Բացատրում

Բացատրումը ուսուցման այն մեթոդն է, երբ ուսուցիչը ոչ այնքան նոր նյութ է հաղորդում, որքան վերլուծում է նոր ուսումնական նյութը, պարզաբանում և ապացուցում է այս կամ այն դրույթը: Օրինակ, ապացուցում է որևէ երկրաչափական թեորեմ :

Աշխատանք դասագրքով

Այս մեթոդի հիմնական նպատակը սովորողներին ուսումնական գրականության հետ աշխատել սովորեցնելն է: Լայն առումով այն իր մեջ ներառում է անհրաժեշտ տեղեկատվության որոնման, մշակման և ընտրողաբար յուրացման կարողությունների ձևավորումը:

Բարձրորակ ուսումնական գիրքը հաջողությամբ կարող է լուծել ուսուցման զարգացնող, դաստիարակող, խթանող և վերահսկող ֆունկցիաները :

ԳԼՈՒԽ 3

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

Խորհրդավորություն

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը:

Հետևաբար՝ երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ. Ես մտքիս մեջ բան եմ պահել, դուք պետք է հարցերի միջոցով պարզեք մեր այսօրվա դասի թեման ։

Երեխաները սիրում են զարմանալ։ Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը։ Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է։ Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը։ Վերջինս ձևակերպվում է պատկերում արտացոլված ոճով։ Օրինակ՝ կարելի է դասի սկզբում հարցնել՝ ի՞նչ կլիներ, եթե բոլորը միայն լավ ու բարի գործեր կատարեին։ Մեկ այլ տարբերակ է աշակերտների կողմից ուրիշի դեր ստանձնելը։ Օրինակ՝ պատկերացրեք հանդիպել եք ճնճղուկին։ Ի՞նչ խորհուրդ կտայիք նրան(օրինակները 2-րդ դասարանի Մայրենիի դասագրքից են)

Մեջբերումներ

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը։ Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն։ Ահա մի քանի օրինակներ, որոնք մենք կիրառել ենք թեմայի ամփոփման ժամանակ.չենք նշել, թե որ միտքը դասագրքի թեմայի որ հերոսն է

Միայն դասի ավարտին են աշակերտներն իմանում, որ խոսքերի հեղինակն իրենց կողմից որոշակիորեն կոնկրետ վերաբերմունքի արժանացած կերպարներն են։

Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն հաղորդակցական մեթոդներից մեկը մտագրոհն է։ Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ։ Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը։ Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները։ Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված։ Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը։ Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից։ Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը։ Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն։ Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին։ Պարզապես լրացնում է այն։

Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

Ինձնից առաջ հարցրու երեք հոգու

Այս հնարի իմաստն այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին հարցերով դիմել իրենց դասընկերներին և իրեն դիմել միայն այն բանից հետո, երբ երեք աշակերտների դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը: 11. Դասի զեկուցող Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին:

Այս և նմանատիպ մեթոդներն են զարգացնում սովորողների խոսքը, ապահովում նրանց հաղորդակցումը և համագործակցությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդյունավետ կազմակերպված մանկավարժական հաղորդակցման գործընթացը հնարավորություն է տալիս մանկավարժական գործունեության ժամանակ ապահովելու իրական հոգեբանական շփում, որը պետք է առաջանա մանկավարժի և երեխաների միջև՝ նրանց վերածելով հաղորդակցման սուբյեկտների, օգնելով հաղթահարել տարաբնույթ հոգեբանական խոչընդոտները, որոնք առաջանում են փոխգործունեության գործընթացում, երեխաներին ուղղորդել համագործակցության՝ դարձնելով մանկավարժական ստեղծագործության սուբյեկտների:
- Ճիշտ ընտրված մեթոդներն են դասի նպատակին հասնելու լավագույն միջոցները:
- Խոսքային մեթոդները հնարավորություն են տալիս զարգացնել սովորողների և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքը , ապահովել նրանց հաղորդակցումը:
- Ուսուցման գործընթացում աշակերտից չի կարելի պահանջել անմիջապես պատասխանել որևէ հարցի: Ինքն իրեն մտածելը խոսքի և մտածողության զարգացման շատ կարևոր հնար է: «Նախ մտածի՛ր, ապա՝ խոսիր» կարգախոսը միանգամայն հիմնավորված պահանջ է:
- Խոսքի օրինակելի նմուշներ երեխաները նախ ստանում են ընտանիքում՝ ծնողներից, հարազատներից, ապա դպրոցում՝ ուսուցիչներից և, հատկապես, այն նյութերից, գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք նրանք կարդում են և պատմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աբրահամյան Ս. Գ. , Աշակեչտի խոսքի զարգացումը, Ե., Լույս, 1973,

Շավարշյան Ա. Մ., գիրք Բ, հայպետուսմանկիրատ, Եր., 1961թ.,

Сухомлинский В. А. Сердце отдаю детям. Киев: Изд – во «Радяньска школа», 1987,

Составитель А. В. Плеханов, М., Педагогика, 1983,

Лельчицкий И.Д. Идеал учителя как научное понятие //Педагогика. – 2005. – №1, март,

Фалей М. В., Педагогическое общение : учебное пособие / М. В. Фалей. – Южно–Сахалинск : изд–во СахГУ, 2014,

Чернышевский Н. Г., Избранные педагогические сочинения./ Под редакций А. Ф.